

## ԿԱՐԾԻՔ

### **Շահանք ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Արդի խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշարի ոճաիմաստային առանձնահատկությունները ( Հայերենի զուգադրությամբ) թեկնածուական ատենախոսության մասին**

XX դարի երկրորդ կեսին դարձվածաբանությունը ձեռք բերեց լեզվաբանական ինքնուրույն ոլորտի կարգավիճակ, և իրավամբ անհրաժեշտություն առաջացավ այն դիտարկել որպես լեզվաբանության առաջատար ճյուղերից մեկը:

Ժամանակակից լեզվաբանությունը հանդես եկավ դարձվածաբանության տեսության նորովի մեկնաբանմամբ: Գրվեցին բազմաթիվ աշխատություններ, լույս տեսան ընդհանուր, երկլեզվյան և դարձվածաբանական բառարաններ, որոնք ցույց տվեցին, որ յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանություն արտացոլում է տվյալ ժողովրդի ազգամշակութային ինքնատիպությունը, նրա յուրահատուկ լեզվամտածողությունն ու պատկերանշանային համակարգը:

Հեղինակն իրավացիորեն նշում է, որ Ֆրանսերենը՝ լինելով եվրոպական առաջատար լեզուներից մեկը, օժտված է չափազանց հարուստ դարձվածաբանությամբ, որում արտացոլվում են հանրային կյանքի բոլոր ոլորտները: Իսկ այդ դարձվածամիավորների մեջ իրենց նշանակալի տեղն ունեն խոսակցական ֆրանսերենի դարձվածքները՝ խիստ ինքնատիպ, անկրկնելի ու բացառիկ, որոնք գրական ծագում ունեցող դարձվածքների կողքին կազմում են ֆրանսերենի ամբողջական դարձվածապաշարի մեծածավալ մի հատվածը:

Ատենախոսը գիտական շարադրանքի ոգուն համապատասխան փաստարկմամբ խոսում է ուսումնասիրության **օբյեկտի, առարկայի, նպատակի, արդիականության, գիտական նորույթի, տեսական և գործնական արժեքի** և կիրառված **մեթոդների մասին:**

Ատենախոսությունը բաղկացած է **Ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, Գրականության և Գրական աղբյուրների ցանկերից և Հավելվածից:**

Նախ խոսենք ատենախոսության դրական կողմերի մասին:

Կարծում ենք, որ աշխատանքի ամենամեծ առավելությունը պետք է համարել ատենախոսությանը կից ներկայացված Հավելվածը, (խոսակցական դարձվածքների ֆրանսերեն – հայերեն բառարանը):

Գնահատանքի է արժանի այն փաստը, որ Հավելվածի նյութը միայն բառարաններից վերցված դարձվածքները չեն, այլ նաև ֆրանսիական գեղարվեստական գրականությունից վերցված օրինակներ: Ինչպես նշում է հեղինակը. «Ատենախոսության **փաստական նյութը** զանազան բառարաններից և ֆրանսիական գեղարվեստական գրականության XIX – XX դարերի և գրական տարբեր ուղղությունների պատկանող հեղինակների 50 անուն ստեղծագործություններից քաղված առավել ուշագրավ և ուսումնասիրվող նյութի տեսանկյունից որոշակի կարևորություն ունեցող **1028** խոսակցական դարձվածքներն են, որոնք հայերեն համարժեքներով ներկայացված են աշխատության վերջում՝ որպես Հավելված»:

Անշուշտ դրական է նաև այն հանգամանքը, որ հեղինակը կատարում է դարձվածաբանական վերլուծություն՝ հենվելով մասնավորապես՝ Ժ. Բեռնարի, Պ. Գիրոյի, Ա. Սովաժոյի, Ա. Ռեյի, Վ. Գակի, Զ. Լևիտի, Ա. Նազարյանի, Գ. Սոկոլովայի, Վ. Վինոգրադովի, Ա. Կունինի, Մ. Կոտովայի, Վ. Արխանգելսկու և այլոց գիտական լուրջ աշխատությունների վրա՝ ապահովելով այսպիսով ատենախոսության **տեսական հենքը:**

Այդուհանդերձ, կցանկանայինք ադրադառնալ աշխատանքում առկա որոշ թերությունների՝ կապված մասնավորապես անհաջող կամ ոչ ճշգրիտ թարգմանությունների հետ: Օրինակ.

Cet amour de femme, grande comme un fagot, mince comme une aiguille, **adroite comme un singe**, a passé par le haut du four et m'a ouvert la porte de la maison.

(H. de Balzac, Splendeurs et Misères de courtisanes, p. 175)

Այդ սիրահաճ կինը, խրճի պես ստվար, ասեղի պես նրբին, **կապկի պես հնարամիտ**, հաղթահարեց վայրիվերումներն ու բացեց իմ առաջ տան դուռը: (Էջ 40)

✓ Grande comme un fagot - խրճի պես ստվար

Անհասկանալի է՝ ինչ խուրճ, իսկ grande-ը ստվար չի կարելի թարգմանել, որովհետև հաջորդում է՝**ասեղի պես նրբին** պատկերը: Հեղինակը նկատի ունի՝ ցախատի կամ ցախավելի նման չորուկ, այն է՝ երկար և բարակ:

✓ ...a passé par le haut du four- հաղթահարեց վայրիվերումները

Այստեղ առկա է նաև իմաստային սխալ, որովհետև ընդհանրապես չի ներկայացնում իրական պատկերը, այն է՝ կինը ճարակորեն անցնում է ջեռոցի վրայով և բացում դուռը:

**Վայրիվերում** բառը հայերենում նշանակում է *դեպքերի բուռն ու խառնակ ընթացք, անկարգություն, խառնաշփոթ*:

Այստեղ խոսքը կոնկրետ՝ ճարակորեն ջեռոցի վրայով անցնելու մասին է և ոչ թե դեպքերի և իրադարձությունների ընթացքի:

✓ **adroite comme un singe- կապկի պես հնարամիտ**

Համամիտ լինելով, որ adroite նաև հնարամիտ է նշանակում՝ այս համատեքստում կարծում ենք, որ խոսքը ֆիզիկական ճարակության մասին է :

Մեկ այլ թարգմանություն, որը կարծում ենք անհաջող է կատարված:

**Au dessert**, on causa sérieusement de l'avenir des enfants. Nana ne montrait aucun goût. Oh ! elle galopait, elle montrait ce goût ; mais, pour le reste, elle **avait des mains de beurre**.

(É. Zola, L'Assommoir, t. II, p. 177)

**Քաղցրեղենը ճաշակելիս** լուրջ խոսակցություն ծավալվեց երեխաների ապագայի մասին: Նանային դա չէր հետաքրքրում: Օ՛հ, նա վազվզում էր, նրան դա էր հաճելի. մնացած ամեն ինչում նա անճարակ էր: (էջ 49)

**Au dessert**-ը թարգմանվել է՝ **քաղցրեղենը ճաշակելիս**

✓ **dessert-աղանդեր** բառը բացի քաղցրեղենից, կարող է նշանակել նաև միրգ, պաղպաղակ և այլն: Այդ իսկ պատճառով սխալ է միայն քաղցրավենիք բառով փոխարինելը, և, բացի դրանից, աղանդերը նաև ժամանակի մեջ տեղայնացնում է գործողությունը, այսինքն՝ այն ժամանակ, երբ ճաշել, վերջացրել են և անցել աղանդերին:

✓ bavard comme **une pie** – շաղակրատ, չաչանակ (էջ 39)

Թարգմանությունը ճիշտ է, բայց ոչ լիարժեք, որովհետև ունենք **չաչանաչ կաչաղակ** համարժեք դարձվածքը:

✓ Ne pas bouger (remuer, lever) **le petit doigt** – մատը մատին չտալ, ոչինչ չանել, պարապ մնալ (էջ 54)

Այս դեպքում նույնպես ունենք հայերեն համարժեք՝ **ճկույթն** իսկ չշարժել, պզտիկ մատն իսկ չշարժել (արևմտ.):

Մեկ այլ տեղում կարդում ենք. «Հանրահայտ է, որ իրականության առարկաները, երևույթներն ու դրանց հատկանիշները տարբեր կերպ են անվանվում հաղորդակցական ակտի ընթացքում՝ պայմանավորված մի շարք գործոններով, ինչպիսիք են խոսողի (գրողի) հաղորդակցական **դիտավորությունը** (intention), իրադրային առանձնահատկությունները, խոսակիցների սոցիալական

կարգավիճակը, կրթվածության աստիճանը, տարիքը, մնայուն կամ անցողիկ հոգեվիճակը, նախորդ փորձը, իմացության մակարդակը, և այլն»: (էջ 45)

- ✓ Կարծում ենք, որ **intention**-ը ոչ թե **դիտավորություն**, այն **մտադրություն** պետք է թարգմանել, որովհետև դիտավորությունը նախ և առաջ կապվում է մեղքի հետ, ահավասիկ **դիտավորություն** բառի բառարանային իմաստը.

դիտավորություն - մեղքի ձև, երբ հանցագործը գիտակցել է հանրության համար վտանգավոր իր գործունեության կամ անգործության բնույթը, նախատեսել և ցանկացել դրա հետևանքները կամ գիտակցաբար թույլ տվել այդպիսի հետևանքների առաջացում:

Այս նախադասության մեջ *par dérision*-ի թարգմանությունը նույնպես հաջողված չէ:

On dit, *par dérision* : “Gracieux comme une porte de prison”, et on dit vrai. Celle-ci ne faisait pas mentir le proverbe : solidement ferrée et renforcée de clous, avec un guichet étroitement grillagé, elle avait un aspect sinistre. (էջ 89)

(E. Le Roy, Jacquou le Croquant, p. 77)

**Կատակով** ասում են. «Բանտի դռան պես սիրալիր» և ճիշտ են ասում: Այդ դուռը չի հերքում առածը. հիմնովին երկաթապատ ու գամերով ամրացված, կուռ վանդակացանցով, այն չարագուշակ տեսք ունի:

- ✓ *Par dérision* -ը թարգմանվել է **կատակով**, կարծում ենք, որ պետք է թարգմանել ոչ թե կատակով, այլ՝ **հեգնանքով կամ ծաղրով, ծաղրանքով**:

Նշված դիտարկումները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը, ուստի կարող ենք ասել, որ ներկայացվող ուսումնասիրությունը լիովին

համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակ Շահանե Յուրիկի ՊԵՏՐՈՍՅԱՆԸ լիովին արժանի է իր կողմից հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Վարդուի ՊԵՏՐՈՍՅԱՆ, ք.գ.թ., դոցենտ

Վ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ

Երևանի պետական համալսարանի գիտքարտուղար

ք.գ.թ. Մերի Հովհաննիսյան

«07» սեպտեմբերի 2022թ.

